Հայտարարություն

Շահերի բախման բացակայության մասին

ք. Գյումրի 04 մարտ 2026թ.

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի /ընդունված 2016թ. դեկտեմբերի 16/ 33-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ կետերի, այն է՝ մեջբերում. <<Գնահատող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը չի կարող մասնակցել գնահատող հանձնաժողովի աշխատանքներին, եթե հայտերի բացման նիստին պարզվում է, որ վերջիններիս կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը, կամ իրենց մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր,տատ, պապ, թոռ, թոռնուհի) կամ այդ անձի կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը տվյալ ընթացակարգին մասնակցելու համար ներկայացրել է <<հայտ>>: Հանձնաժողովի անդամները և քարտուղարը ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հրապարակվում է տեղեկագրում: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀԱՆԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/38 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամներս հայտարարում ենք, որ սույն ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի նախագահ՝ Բենհուր Մարտիրոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Խաչատուր Կարապետյան

Էմմա Ստեփանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Տաթևիկ Խալաթյան